ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Ծննդյան 120-ամյակի առթիվ)

Ճարտարապետության դոկտոր Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Կան տարելիցներ, որոնք չեն սահմանափակվում սովորական պատկերացումների շրջանակներում և այդ անսովորությունն է հենց, որ նրանց դարձնում է այնքան հիշարժան ու նվիրական։

Համարյա մեկ դար է անցել այն օրից, երբ 1892 թ. երիտասարդ գիտնական Նիկողայոս Մառը, 16 բանվորի գլուխ անցած, սկսեց Անիի սիստեմատիկ, որոշ ընդհատումներով քառորդ դար տևած պեղումները, որոնք անգնահատելի ավանդ հանդիսացան հայկական մշակույթի և հատկապես ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում։

Մառը առաջինն էր, որ լուրջ դիտական հիմքերի վրա դրեց հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության գործը։ Բնականաբար հարց է առաջանում, ինչպիսին էր իրադրությունը այս բնագավառում մինչև Մառը։ Հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությանը հնարավոր եղավ ձեռնարկել միայն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո։ Արդեն անցյալ դարի առաջին կեսին Հայաստան են այցելում Դյուբուան, Տեքսիեն, որոնց աշխատությունները փաստորեն առաջին գործերն էին, որ գիտական աշխարհին ծանոթացրին հայկական ճարտարապետության որոշ հուշարձաններին։ Այդ գործերը, իրենց բազմաթիվ պատմական և չափագրական սխալների հետ մեկտեղ, մինչև XX դարը մնացին որպես միակ աղբյուրը հայկական ճարտարապետության ուսումնասիրության համար։ Դյուբուան հայկական ճարտարապետությունը համարում էր բյուզանդական ճարտարապետության մի մասը, իսկ Ֆ. Կլյուգեն այն մտցնում էր «իսլամական» արվեստի մեջ։ Հնդեվրոպաբանական տեսության ջատագովները (Օգյուստ Շուազի) հայկական ճարտարապետությունը դիտում էին որպես մի օղակ արևելյան ձևերի Եվրոպա ներթափանցելու ճանապարհին, տեսություն, որը հետագայում դարձավ Ստրժիգովսկու դրույթների հիմնաքարը։

Միանգամայն այլ ուղիներով անցավ հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործը Ռուսաստանում։ Այս տեսակետից առաջնակարգ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ դեռևս անցյալ դարի կեսերին Կովկասը իր գիտական ուսումնասիրությունների շրջանակների մեջ առավ Ռուսական աշխարհագրական ընկերությունը։ Իր բեղմնավոր գործունեությունը հատկապես վիմագրության ասպարեզում ծավալեց Բրոսսեն։ Սակայն միաժամանակ ակադեմիկոս Կոնդակովի կարծիքով Կովկասում գերիշխում էր բյուզանդական ճարտարապետությունը, իսկ հայկական ճարտարապետության ոճական ուղղությունը ձևավորվել էր ոչ վաղ, քան XV—XVI դդ.։

Մյուս կողմից, ազգային ավանդական պատմությունը հեռու էր հայ ժողովրդի պատմության և հատկապես XII—XIV դդ. պատմության ճիշտ գնահատումից և այն չէր կարող հաստատուն հենարան լինել ճարտարապետական մշակույթի տարբեր շրջանների տեսական կառուցումների համար։ Անհրաժեշտ էր մի նոր, թարմ ուժ, որը մի կողմ դներ ազգային-ավանդական պատմագրության ռոմանտիկ պատկերացումները և իրական փաստերի, մատենագրա-

կան տեղեկությունների և հատկապես հուշարձանների ուսումնասիրության հիման վրա կարողանար կազմել հայկական ճարտարապետության ճիշտ ժամանակագրությունը։

Այդպիսին եղավ երիտասարդ գիտնական Նիկողայոս Մարը։ Ընդհանուր պատմաբանասիրական բարձր պատրաստականություն, արևելագիտական հարուստ գիտելիքներ, հնագետի և արվեստաբանի սուր աչք. ահա այն հիմնաքարը, որի վրա բարձրացան նրա մեծարժեք աշխատությունները։

Մարը թերևս չէր էլ պատկերացնում սկզբում, թե ճարտարապետությունը որքան մեծ տեղ է գրավելու իր հետազոտություններում։ Մորգանի հայտնի պեղումները, որոնք խթան հանդիսացան Կովկասում և հատկապես Անիում ձեռնարկած պեղումների համար, հույսեր էին ներշնչել, որ Անին, միջնադարյան այդ հարուստ, վաճառաշահ քաղաքը նույնպես հարուստ հնագիտական նյութեր կտա։ Սակայն առաջին իսկ պեղումները միանգամայն այլ բան պարզեցին։ Հնագիտական նյութի համարյա թե իսպառ բացակայություն և արտակարգ հարուստ նյութ ճարտարապետության, որմնանկարչության բնագավառներում։ Այդպիսին էր 1892 թ. պեղված Բախտաղեկի եկեղեցին։ Սակայն Անին ինչքան էլ շքեղաշուք և հարուստ, հիմնականում բնութագրում էր X—XIV դդ.։ Եվ պատահական չէ, որ Մարը շուտով դուրս եկավ նրա սահմաններից, ընդարձակեց հետազոտությունների շրջանակները՝ ներգրավելով Երեռույքն ու Տեկորը, Շիրակավանն ու Գառնին, հասավ մինչև Վան։

Առաջին իսկ հետազոտությունները շատ բան պարզեցին։ Մարի վրա արտակարգ տպավորություն թողեց այն, որ XII—XIV դդ. իրականում բնավ էլ անկման դարաշրջան չէին, և ինչքան խորանում էր նա հայկական միջնադարյան մշակույթի մեջ, նրա համար այնքան ակնհայտ էր դառնում, որ շատ բան պետք է նորից գրվի, շատ բան հիմնովին վերանայվի։ Թեև Մարը նպատակ չի ունեցել շարադրել հայկական ճարտարապետական մշակույթի ընդհանուր պատմությունը, սակայն նրա դրույթները ունեն արտակարգ ներքին միասնություն՝ ընդգրկելով հայկական ճարտարապետության հանգուցային հարցերը հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար։

Մարը վճռականապես ըմբոստանում էր հայկական ճարտարապետությունը բյուզանդական (վաղ շրջանում) և սելջուկյան (ուշ դարերում) մշակույթների մի մասը համարող տեսությունների դեմ, քննադատում Ս. Ստրժիգովսկու տեսությունը հայկական ճարտարապետական մշակույթը հնդեվրոպարանության կոնցեպցիաներին հարմարեցնելու համար։ Նա գրում է. «Մեզ չպետք է գայթակղեցնի ազգային-ավանդական հպարտությունը հմայող եվրոպական մեծ փառքը, որը մեծահոգաբար շնորհվում է հայ մշակույթին օդում ճախրող եթերային տեսության կողմից»[1]։ Հայկական միջնադարյան մշակույթի ակունքները Մարը տեսնում էր Հայկական լեռնաշխարհի բնիկների նյութական մշակույթի մեջ, և «հայերի համար նախապատմությունը— դա հենց Հայաստանի իսկական պատմությունն է, խալդերի և ուրարտացիների պատմությունը, լի հեքիաթային և միաժամանակ ակնհայտ իրական շինարարական գործերով, ոչ միայն պալատների և տաճարների, ամրոցների և քաղաքների, այլև հաղորդակցության ճանապարհների ու ջրանցքների»[2]։ Եվ այս ոգված է այն ժամանակ, երբ հայտնի չէին Կարմիր բլուրը, Էրեբունին, Արգիշտիխինիլին։

Ճարտարապետության պատմության ընթացքը հասկանալու համար արտակարգ նշանակություն ունի ճիշտ ժամանակագրությունը։ Մարը առաջինն էր, որ դեռևս դասակարգին կարողացավ նշմարել հայկական ճարտարապետական մշակույթի հիմնական փուլերը։ Նախահայկական շրջանից հետո նա նշում է Արշակունյաց շրջանը, որն ընդգրկում է հայկական ճարտարապետությունը մինչև քրիստոնեության մուտքը։ Հաջորդ շրջանն ընդգրկում է

[1] Ленинградское отделение Архива АН СССР, Архив Н. Я. Марра (далее—Архив Н. Я. Марра), ф. А-1147, с. 47.

[2] Н. Я. Марр Избранные работы. Т. III, М.—Л., 1935, с. 170.

քրիստոնեության մուտքից մինչև VI դարն ընկած ժամանակաշրջանը։ Նրան հաջորդում է մեկ այլ շրջան, որը տևում է մինչև VIII դարի վերջը։ Հաջորդը «Թագավորների» շրջանն է՝ IX—XI դդ., որին հետևում են XII—XIV դդ.[3]։

Մառի ժամանակ Հայկական լեռնաշխարհի հնագույն հուշարձաններից բիչ բան էր հայտնի՝ ուրարտական առանձին հուշարձաններ միայն, իր կողմից պեղված Գառնին, Անիում Կամսարականների պալատի հնագույն պա-

Մառը Անիում

տերը, Անիում պեղված քառամույթ կառույցը և մի քանի այլ մնացորդներ։ Սակայն նույնիսկ այդ սակավաթիվ նյութերը Մառի համար հիմք հանդիսացան լայն ընդհանրություններ կատարելու, ցույց տալու, որ սխալ է հեթանոսական և քրիստոնեական արվեստների միջև անջրպետ տեսնելը։

Հայկական ճարտարապետության կազմավորման ուղիները ճիշտ հասկանալու համար այսօր ևս խիստ կարևոր են Մառի դրույթները հելլենիստական շրջանի ճարտարապետական արվեստի ընդերքում եղած ուղղությունների մասին։ Մառը հայկական հեթանոսական ճարտարապետության մեջ տեսնում է երկու ուղղություն՝ առաջինը տեղական, իսկ երկրորդը՝ կազմավորված հունա-հռոմեական ճարտարապետության ազդեցության ներքո։ Նա նշում է, որ քրիստոնեությունը իր կնիքն է դրել ճարտարապետության հետագա ամբողջ զարգացման վրա և երկու տիպի կառուցվածքներն էլ հարմարեցրել նոր պահանջներին և նոր պայմաններին։ Նա գրում է. «Քրիստոնեության

[3] Архив Н. Я. Марра, ф. А-410, с. 35.

շրջանում տեղական քրիստոնեական պաշտամունքի հուշարձաններ են բարձրանում ոչ միայն տեղական յուրօրինակ (самобытный) կառուցվածքների փլատակների վրա, այլև հեթանոսական այն կառուցվածքների հիմքերի վրա, որոնց ձևերը Հայաստան են բերվել դրսից, դրանք կառուցող հայկական թագավորական տան ջանքերով»[4]։ Այդպիսին էր հելլենիստական Գառնին, որը քրիստոնեություն ընդունելու ժամանակ վեր է ածվել եկեղեցու, և ինչպես պարզել են պեղումները, նրա մեջ երկաբսիդ եկեղեցի է կառուցվել։

Մյուս, տեղական-ավանդական ճարտարապետական մշակույթի մի օրինակ էր նույնպես Մառի կողմից Անիի տարածքում պեղված չորս ցածրանիստ, հզոր մույթեր ունեցող կառույցը, որն առնչվում էր արդեն, Մառի կարծիքով, իրանական կրակապաշտական հավատալիքներին և հետագայում է, որ նրա մույթերը միացվել են չորս աբսիդներով և վերածվել քրիստոնեական խաչաձև եկեղեցու[5]։ Ճարտարապետական այս երկու ուղղությունները քանդակի բնագավառում իրենց զուգահեռները գտան արդեն հետագայում հայտնաբերված այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են, մի կողմից, Արտաշատում և Գառնիում հայտնաբերված քանդակները[6] և մյուս կողմից՝ Դվինում գտնված իշխանավոր անձանց դիմաքանդակները, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն հելլենիստական արվեստի հետ[7]։

Ոչ պակաս ուշագրավ, հետաքրքրական են Մառի դրույթները հայկական միջնադարյան ճարտարապետության ամենավաղ շրջանի կազմավորման հարցում։ Ֆեոդալական հարաբերությունների հաստատումը, քրիստոնեության տարածումը սկզբունքային նոր նախադրյալներ ստեղծեցին պաշտամունքային կառույցների շինարարության հարցում։ III—IV դդ. սահմանագիծը մի շրջան էր, երբ դեռևս խոսք չէր կարող լինել քրիստոնեական ճարտարապետության մեջ կանոնիկ ձևերի մասին ո՛չ Ասորիքում, ո՛չ Պաղեստինում և ո՛չ էլ Հռոմում։

Դուրա-Եվրոպոսի օրինակը ցույց է տալիս, որ քրիստոնեական աղոթարանները քողարկված էին սովորական բնակելի տներում, և իսպառ բացակայում էին մոնումենտալ, ընդարձակ շենքերը։ Սակայն նույն այդ ժամանակ Հայաստանում քրիստոնեությունն արդեն պետական կրոն էր և բնականաբար հարց է առաջանում՝ որտե՞ղ են առաջին հայկական քրիստոնեական մոնումենտալ կառույցների ակունքները։ Մառը գրում է. «Ով ցանկանում է Հայաստանի VII դարի քրիստոնեական պաշտամունքի հայակերտ կառուցվածքների ձևերում նշմարել աշխարհիկ ճարտարապետության ազդեցությունը, նա պիտի իմանա, որ հին Հայաստանում, քրիստոնեության ընդունման շրջանում բացի գյուղական խղճուկ խրճիթներից կային նաև իշխանական հոյակերտ պալատներ, և երբ հաղթանակած քրիստոնեությունը սկսեց իր աղոթարանները կառուցել, նա բնավ էլ կարիք չուներ ընդօրինակելու գյուղական բնակարանների նախնադարյան կառուցողական ձևերը»[8]։ Որ Մառի այս դրույթը ենթադրություն չէ միայն, վկայում է IV—V դդ. հայկական պալատական կառույցների և բազիլիկ տաճարների հորինվածքային արտակարգ նմանությունը։ Բավական է համեմատել Դվինի պալատները Քասաղի, Աշտարակի բազիլիկների հետ, այդ բանում համոզվելու համար։

Ոչ պակաս արժեքավոր է Մառի դրույթը քրիստոնեական եկեղեցիների գմբեթավորման հարցում։ Այդ մի բարդ պրոցես էր, ընդ որում կան մի շարք իրարամերժ տեսություններ, որոնց խորքի վրա Մառի կռահումը խիստ

---

4 Н. Я. Марр, Я. И. Смирнов. Вишапы. Л., 1931, с. 95.

5 Ս. Ս. Մնացականյան. Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները. Երևան, 1982, էջ 76—86, աղ. XXI, նկ. 41-բ։

6 Б. Н. Аракелян. Очерки по истории искусства древней Армении. Ереван, 1976, с. 23.

7 Նույն տեղում, էջ 17։

8 Архив Н. Я. Марра, ф. А-940, с. 39.

ուշագրավ է և հետաքրքիր։ Խոսելով հայկական պաշտամունքային կառուցվածքների գմբեթների մասին, նա հարց է դնում՝ արդյո՞ք այստեղ օգտագործվող գմբեթները իրենց նախորդները չեն ունեցել աշխարհիկ պալատական կառուցվածքների համապատասխան ձևերում և արդյո՞ք նման կապի արտահայտությունը չէ այն հանգամանքը, որ հայերենում և վրացերենում պաշտամունքային կառույցը կոչվում է նաև հին պարսկերենում հայտնի taçara տերմինով, որ նշանակում է «պալատ», «տաճար»։ Պաշտամունքային կառույցները նշելու համար,— գրում է Մառը,— հայերենում համահավասար կերպով օգտագործվում են և՛ արևմտյան, և՛ արևելյան տերմինները, մինչդեռ գմբեթը արտահայտող տերմիններն ունեն զուտ արևելյան բնույթ. նա նշում է, որ եթե և՛ հայերենում, և՛ վրացերենում պաշտամունքային կառուցվածքը սովորաբար կոչվում է հունարեն եկկլեսիա տերմինով (հայերենում՝ եկեղեցի, վրացերենում՝ եկլեսիա), ապա գմբեթի նշանակման համար և՛ հայերը, և՛ վրացիները օգտագործում են արդեն արևելյան տերմին՝ պարսկերեն գումբաղ, հայերեն գմբեթ, վրացերեն գումբեթի, այսինքն՝ մի տերմին, որն ունի ասորական ծագում»[9]։

Լեզվաբանական լայն իմացությունները նրան հնարավորություն էին տալիս ազատ կերպով խորանալու ճարտարապետական ձևերի ու տերմինների իմացաբանության մեջ, բացահայտելու այնպիսի կարևոր կառուցվածքային հորինվածքների համար օգտագործվող տերմինների ակունքները, ինչպիսիք են կամարը և թաղը։ Նա գրում է, որ «ամենայն հավանականությամբ կգա ժամանակը, երբ փաստական նյութերի հիման վրա հնարավոր կլինի ապացուցել հայկական քրիստոնեական ճարտարապետության մեջ տեղական հեթանոսական ճարտարապետական մշակույթի ավանդույթների առկայությունը»[10]։ Սակայն դրա հետ միասին, Մառը հատկապես նախազգուշացնում է ավելորդ հրապուրանքներից և պահանջում խուսափել առանձին ձևերի և տերմինների նմանության հիման վրա շատ հեռուն գնացող եզրակացություններից, գրելով, որ «...երբեք չի կարելի Զվարթնոցի խոյակների ոլորաղարդերի անմիջական ակունքները համարել այն ոլորազարդերը, որոնք տեսնում ենք դեռևս բրոնզեդարյան իրերի վրա»[11]։ Այս առնչությամբ նա առաջ է քաշում փոխառությունների համար համապատասխան պայմանների առկայության անհրաժեշտության հարցը, գրելով, որ «ընդօրինակումը, փոխառումը հնարավոր է միայն որոշակի նախադրյալների պայմաններում, մինչդեռ քրիստոնեության տարածման առաջին շրջանում, երբ խորտակվում էր հեթանոսական կրոնը և նոր տարածվող դավանանքը հարյուրավոր թելերով կապված էր իր ծննդավայրի հետ, խիստ դգույշ պիտի լինել այս հարցում, որովհետև հայկական քրիստոնեական մշակույթը այդ ժամանակ շատ ավելի սերտ էր կապված ընդհանուր քրիստոնեության հետ»[12]։

Մառի այս դրույթները չեն կորցրել իրենց նշանակությունը նաև այսօր, և չի կարելի համաձայնել այն ուսումնասիրությունների հետ, որոնք Գառնիի տաճարի չափերը անմիջականորեն հետևցնում են Էրեբունիի Սուսի տաճարի չափերից[13]։

Առաջին վաղ միջնադարյան հայկական հուշարձանը, որը հետազոտեց և նրա մասին մենագրական ուսումնասիրություն գրեց Մառը, դա Երերույքի տաճարն էր։ Երերույքի բազիլիկան հանգուցային նշանակություն ունի հայկական միջնադարյան ճարտարապետության զարգացման պրոցեսում։ Նրա մասին գրված ուսումնասիրությունը, որ սկսված էր 1907 թ., պատրաստ էր

---

9 Նույն տեղում, էջ 76։

10 Նույն տեղում, էջ 71։

11 Նույն տեղում, էջ 74։

12 Նույն տեղում։

13 Ա. Սահինյան. Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը. Երևան, 1983, էջ 210։

հրատարակության արդեն 1910-ին, սակայն ինչ-ինչ պատճառներով լույս տեսավ միայն 1968-ին Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ջանքերով։ Մենագրության մեջ հանգամանորեն ներկայացված է հուշարձանը, լայն համեմատություններ են կատարված ինչպես նրանից ոչ հեռու գտնվող Տեկորի տաճարի, այնպես էլ Ասորիքի նույնատիպ հուշարձանների հետ։ Մառը դարասկզբին թերևս նախատեսում էր միասին հրատարակել Երերույքի և Տեկորի բազիլիկաներին նվիրված հետազոտությունը. այդ է հաստատում Տեկորի տաճարի մանրամասն նկարագրության առկայությունը մենագրության արխիվային օրինակում։ Սակայն այն չկա հրատարակության ներկայացված տեքստում։ Այս հանգամանքը ցավալի է այն տեսակետից, որ Տեկորի տաճարը 1911-ին խիստ վնասվեց երկրաշարժից և գտնվելով մեր երկրի սահմաններից դուրս, միտումնավոր (ներպով ի-պատ) ավերվեց։ Նույն բախտին արժանացան նաև հսկայածավալ Բագավանը ու Բագարանը, թեև Մառի արխիվում պահպանվել է վերջինիս մանրամասն նկարագրությունը։

Դառնալով Երերույքի տաճարին, պետք է ասել, որ այստեղ, առավել քան վաղ միջնադարյան որևէ այլ հուշարձանում դրսևորվել են հայկական և ասորական մշակութային կապերի արձագանքները և բացառված չպետք է համարել, որ Երերույքը հավանաբար եղել է ասորական միսիոներական գործունեության կենտրոններից մեկը Հայաստանում։ Թերևս դրանով էլ պետք է բացատրել այն որոշակի առնչությունները, որ կան Երերույքի և ասորական բազիլիկատիպ կառույցների միջև։

Համեմատաբար ավելի նվազ չափով նույն այս երևույթը նկատելի է Տեկորի տաճարում։ Այստեղից էլ այն տեսական կառուցումները, որոնք հայկական բազիլիկատիպ շենքերի արմատները տանում են դեպի Ասորիք և Պաղեստին՝ համարելով քրիստոնեության օրրանում ստեղծված ձևերի հետագարձ արձագանք հեռու հյուսիսում։ Թերևս նման միակողմանիությունը չգերակշռեր Մառի տեսակետների մեջ, եթե նա դարասկզբին ծանոթ լիներ Երերույքից և Տեկորից էլ ավելի վաղ և ասորական կառույցներից զգալիորեն հեռացող այնպիսի բազիլիկաներին, ինչպիսիք են Քասաղը, Աղցը, Եղվարդը։ Սակայն այդ ամենի հետ միասին Մառը բնավ չի ժխտում տեղական ձևերի որոշակի նշանակությունը վաղ քրիստոնեական բազիլիկաներին բնորոշ հորինվածքների կազմավորման հարցում, գրելով, որ հայկական բազիլիկային «առանձնացող հատկանիշներն իրենց ակունքներն ունեն հայկական ֆեոդալական աշխարհի գեղարվեստական հակումների, նախաքրիստոնեական արվեստի, արհեստավորական սովորույթների և իրանական աշխարհի համանման երևույթների միջև եղած ընդհանրություններում, երևույթներ, որոնք իրենց առավել ցայտուն դրսևորումն են գտել, այսպես կոչված, սասանյան մշակույթի մեջ»[14]։ Մառի այս խոսքերի մեջ կարծես ի մի է հավաքված նրա ամբողջ տեսությունը բազիլիկատիպ կառույցների ծագման և յուրահատուկ գծերի մասին։ Չպետք է մոռանալ նաև, որ Մառի այս տողերը գրված են այն ժամանակ, երբ եվրոպական արվեստաբանության մեջ գերիշխում էին միակողմանի ազդեցությունների վրա կառուցված տեսությունները և խոսք անգամ չէր կարող լինել բազիլիկատիպ կառուցվածքների ինչ-որ յուրահատկությունների մասին քրիստոնեության օրրանից այնքան հեռու ընկած Կովկասում։

Մառի ձեռագրերում, հատկապես դաշտային ծոցատետրում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք այսօր միակ սկզբնաղբյուրներն են այս կամ այն կոնստրուկտիվ ձևի, զարդաքանդակի մասին։ Շատ հուշարձաններ այժմ չկան, իսկ նրանց մեծ մասը անմատչելի է ուսումնասիրության համար։

Մասնագիտական գրականության մեջ ընդհանրացել է այն կարծիքը, որ հայկական եռանավ բազիլիկաների մույթերը, Քասաղի բազիլիկայի նման, միշտ էլ եղել են Т-աձև։ Մինչդեռ Մառի գրառումները ակնհայտորեն ցույց

---

[14] Архив Н. Я. Марра, ф. А-1538, с. 335.

են տալիս, որ Երերույքում մույթերը եղել են խաչաձև, հանգամանք, որը մեծ նշանակություն ունի բազիլիկ կառուցվածքների կոնստրուկտիվ ձևերի զարգացման ուղիները պարզելու համար[15]։

Կենտրոն ունենալով Անին, նա լայն շրջագայություններ է կատարում, լինում Հաղբատում, Սանահինում, Թալինում, իսկ զվարթնոցատիպ տաճարների ձևերի հետազոտության նպատակով մեկնում Տայք, լինում Բանայում և Իշխանում։ Սակայն ամեն դեպքում հետազոտական աշխատանքների կենտրոնը մնում էր Անին։ Տարիների փորձը ցույց տվեց, որ այստեղ իզուր էր սպասել հարուստ հնագիտական նյութ, քաղաքը լքվել էր աստիճանաբար։ Այս իրադրությունն էր, որ պայմանավորեց հետազոտական աշխատանքների ամբողջ ուղղությունը՝ Անին ուսումնասիրվում էր որպես ճարտարապետական մի համալիր, և այս առումով արտակարգ նշանակություն էր ստանում նույն Անիում Թորոս Թորամանյանի ծավալած գործունեությունը։ Եվ ինչքան բնդմնավոր էր Թորամանյանի համար Անիի գիտարշավի միջավայրում աշխատելը, այնքան նրա հիանալի չափագրությունները և սուր աչքը անհրաժեշտ էին գիտարշավին, հատկապես Մառին, որն արտակարգ բարձր էր գնահատում Թորամանյանին, անում ամեն հնարավոր բան օգնելու այնպիսի ջանասիրությամբ և համառությամբ աշխատող ճարտարապետին։ Երկու նշանավոր մարդկանց համատեղ գործունեությունը հիանալի արդյունքներ տվեց (բավական է ասել, որ Մառն ինքը ռուսերենի թարգմանեց Թորամանյանի՝ էջմիածնի տաճարին նվիրված աշխատությունը և հրապարակեց այն ռուսական ակադեմիական պարբերականում)։ Եվ այսպես, տարիներ շարունակ աշխատում էին նրանք, սերտ ու համերաշխ, և Թորամանյանը կարող էր հանդիստ լինել՝ իր թիկունքում ունենալով ոչ միայն գիտարշավի նյութական օժանդակությունը, այլև մեծ գիտնականի խոսքը, երբ անհրաժեշտ էր լինում պաշտպանել նրա գիտական մտահղացումները անտեղի հարձակումներից։

Մեկը մյուսի ետևից լույս աշխարհ հանվեցին Անիի նշանավոր կառույցները՝ միջնաբերդի պալատական համալիրը նրա հոյակերտ պալատական գահլիճներով, Առաքելոց եկեղեցին, Գագկաշենը, հյուրատները, չորս մույթերով հնագույն կառույցը, ուսումնասիրվեցին Անիի զարդը կազմող կանգուն տաճարները, հարյուրավոր արհեստական քարանձավները, հզոր պարսպապատերն ու կամուրջները։ Սակայն Անիի կառուցապատումը առաջին հերթին բնորոշվում էր քաղաքացիական շենքերով, և պատահական չէ, որ Մառը առանձնակի տեղ էր տալիս նրանց՝ համարելով ազգային կառուցողական ավանդների շտեմարան։ Նա գրում էր, որ աշխարհիկ ճարտարապետությունը այն բնագավառն է, որտեղ առաջին հերթին են դրսևորվում ամեն մի նորություն, ոճական ուղղության մեջ նշմարվող ամեն մի փոփոխություն։

Կիսագետնափոր հյուղակներից, արհեստական քարանձավներից բացի, պեղումները բացեցին կանոնավոր բնակելի տներ իրենց հիանալի մշակված բուխարիկներով և խորշերով, որոնց պատերը, ինչպես նշում է Մառը, ծածկված են եղել պաստառներով և գորգերով, որոնցից մնացել են տեղում նրանց ամրացնող մեխերը միայն։

Աշխարհիկ ճարտարապետության մեջ մշակված ձևերի հետ է կապում Մառը XII—XIV դդ. պաշտամունքային կառույցները ծածկող դեկորատիվ կամարաշարերը, բուսական և կենդանական զարդաքանդակներով հանդերձ, ինչպես տեսնում ենք այդ Տիգրան Հոնենցի նշանավոր եկեղեցում։ Ակադեմիական պարբերականներում և առանձին բրոշյուրների ձևով հրատարակված հաշվետվություններն ըստ էության պատմաճարտարապետական փոքրիկ մենագրություններ են, գրված պատմական, լեզվաբանական, բանահյուսական նյութերի լայն հենքի վրա։ Այսպիսի մի հրատարակության մինչև օրս չգերազանցված օրինակ է Անիի պալատական եկեղեցուն նվիրված ալբոմը,

15 Архив Н. Я. Марра, ф. А-941, с. 101.

որի տեքստը կազմել էր Մառը, իսկ չափագրությունները կատարել ճարտարապետ Նիկոլայ Բունիաթյանը։

Մանգամայն այլ բնույթի է նրա աշխատությունը նվիրված Անիում պեղված զվարթնոցատիպ Գագկաշեն տաճարին։ Այստեղ Մառը հատկապես կանգ է առնում զվարթնոցատիպ տաճարների ծագման և կազմավորման հարցի վրա, ցույց տալիս, որ մշակվելով Հայաստանում դեռևս VII դարի առաջին կեսին, այն հետագայում, X դարում, իր դրսևորումն է գտնում վրացական Բանա տաճարում։ Յավոք, Մառին այն ժամանակ դեռևս հայտնի չէր Աղվանքում VII դարի երկրորդ կեսին Զվարթնոցի օրինակով կառուցված, անհամեմատ փոքր և պարզեցված Լյակիտի եկեղեցին։ Զվարթնոցատիպ տաճարների կազմավորման առնչությամբ Մառը հատկապես կանգ է առնում ճարտարապետական հորինվածքներում դավանաբանական հոսանքների դրսևորման հարցի վրա, այս տիպի կառույցները համարելով մշակված հատկապես քաղկեդոնական շրջաններում։ Սակայն Մառի այս դրույթի հետ չի կարելի համաձայնվել։ Քաղկեդոնական հոսանքները հայտնի էին դեռևս VI—VII դդ., սակայն ճարտարապետության բնագավառում, կոնկրետ հուշարձանների ձևերում այն չի դրսևորվել ո՛չ վաղ միջնադարում և ո՛չ էլ X—XI դդ.։ Բավական է համեմատել Ավանի և Հռիփսիմեի, Գայանեի և Մրենի տաճարները այդ բանում համոզվելու համար։ Պատմական իրադրության վերլուծությունը տարակույս չի թողնում, որ Զվարթնոցի կառուցումը ոչ մի կապ չի ունեցել քաղկեդոնական դավանանքի հետ, և այն բնավ էլ չէր կառուցվել էջմիածնի ազգային սրբությունները նսեմացնելու համար, ինչպես ենթադրում էր Մառը։ Ավելին, ինքը, Ներսես Շինող կաթողիկոսը Բյուզանդիայի խիստ ճնշման տակ քաղկեդոնականություն ընդունեց Զվարթնոցի շինարարությունը սկսելուց տասը տարի հետո միայն, որի համար էլ արտաքսվեց Դվինից։ Իսկ հայ եկեղեցին շարունակեց Զվարթնոցի շինարարությունը առանց որևէ դադարի։

Մառի ճարտարապետական բնույթի հոդվածներին առանձնակի բնորոշ էին հարցի լուսաբանման ամենատարբեր, առաջին հայացքից անսովոր թվացող մեկնաբանումներ։ Այս առնչությամբ ուշագրավ են նրա դրույթները Բագրատունյաց շրջանում վաղ միջնադարյան նշանավոր կառույցների վերարտադրության վերաբերյալ։ Այս հանգամանքը խիստ ուշագրավ է և հետաքրքիր։ Եվ իսկապես, չի կարելի չնկատել, որ Սմբատ Բագրատունու կողմից IX դարի վերջին կառուցած Շիրակավանի տաճարի հորինվածքը փաստորեն կրկնում է VII դարի այնպիսի մի հոյակապ կառույց, ինչպիսին է Արուճի տաճարը։ Կարսի տաճարը, կառուցված Աբաս Բագրատունու կողմից, խիստ մոտ է VI դարի հուշարձան հանդիսացող Մաստարայի տաճարին, իսկ Անիում XI դարի առաջին տարիներին կառուցված Գագկաշենը համարյա թե Զվարթնոցի կրկնօրինակն է՝ իրականացված Գագիկ Բագրատունի թագավորի հրամանով։ Որոշ ուսումնասիրողներ փորձում են այս երևույթը բացատրել ստեղծագործական որոնումների սահմանափակվածությամբ, մինչդեռ Մառը միանգամայն իրավացի կերպով կապում է այն երկրում ստեղծված պատմական ուրույն իրադրության հետ, երբ ազատագրվելով արաբական տիրապետությունից, նորաստեղծ թագավորությունները ձգտում էին վերականգնել Արշակունյաց հզոր պետությունը նրա սահմաններով և նրա փառքով։ Այս հարցում պակաս նշանակություն չուներ այն հակամարտությունը, որը կար Բագրատունիների և Արծրունիների միջև։ Պատահական չէր բնավ, որ Գագիկ Արծրունի թագավորը X դարի սկզբին իր կառուցած Աղթամար տաճարի պատին պատկերվում է Արշակունիների թագով։ Մառի կարծիքով նույն տենդենցի դրսևորումն է Բագրատունյաց թագավորական նստավայրում հնավանդ, ժամանակով և ավանդություններով սրբագործված հորինվածքների վերարտադրությունը, որոնք նորաստեղծ մայրաքաղաք պիտի տեղափոխեին հին Հայաստանի ամբողջ փառքն ու պատիվը։

Այս ամենը ոչ պակաս յուրովի ձևերով է դրսևորվում նույն շրջանի քան-

դակագործության մեջ։ Անիում, Գագկաշենի պեղումների ժամանակ հայտնաբերված Գագիկ Բագրատունու արձանը Մառի համար առիթ հանդիսացավ անդրադառնալու հայկական միջնադարյան քանդակին ընդհանրապես և հայոց թագավորին չալմայով պատկերելու հարցին մասնավորապես։ Դա մի փայլուն պատմական վերլուծություն է, որտեղ ակնհայտորեն բացահայտվում են այս ուշագրավ երևույթի պատմաքաղաքական նախադրյալները։ Մառը նշում է, որ «չալման ըստ երևույթին պետք է դիտել որպես այն թագը, որով արաբական խալիֆաները պսակում էին. Բագրատունյաց թագավորներին։ Սակայն հետագայում նույն այդ թագավորները, ընդունելով «շահնշահ» տիտղոսը, արդեն առանց խալիֆների գիտության, ինչպես այդ պարզ է դառնում Գագիկի քանդակից, չհրաժարվեցին այդ ավանդական սովորությունից. հավանաբար ավելի շքեղ տեսք տվեցին թագ-չալմային, որն այժմ պետք է համապատասխաներ թե՛ իրենց նոր, ավելի բարձր դիրքին, թե՛ անձնական ճաշակին։ Այդ է պատճառը, որ Գագիկի չալման նկատելիորեն տարբերվում է նրա նախորդի՝ Սմբատ արքայի չալմայից»[16]։

Մառին հայտնի չէր, որ շատ ավելի վաղ, X դարում ճիշտ նման իրադրություն էր ստեղծվել Արծրունյաց թագավորությունում։ Այստեղ X դարի սկզբին Գագիկ Արծրունի թագավորի կողմից կառուցված տաճարի պատին, թագավորական ընտանիքի այլ անդամների հետ միասին պատկերվել է Աշոտ Արծրունին[17]։ Արծրունյաց թագավորության հիմնադիրը նույնպես չալմայով էր՝ նարաբական իշխանությունների կողմից ճանաչված լինելու այդ խորհրդանշանով։ Սակայն խիստ ուշագրավ է, որ նույն տաճարի արևմտյան ճակատի զգալի մասը գրավող Գագիկ արքայի կտիտորական կոմպոզիցիայում ինքը Գագիկ Արծրունին պատկերվել էր արդեն Արշակունիների շքեղ թագը գլխին, կարծես հաստատելով ամբողջ Հայաստանի թագավոր լինելու մասին իր հավակնությունները։ Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, թե ինչպես Մառի գրչի տակ նման հարցերը դառնում են պատմաճարտարապետական, արվեստաբանական փայլուն ակնարկներ, մեծապես լրացնելով, բացահայտելով այն միջավայրը, որտեղ կազմավորվել, ձևավորվել են տարբեր հորինվածքներն ու պատկերագրական տարբեր ձևերը։

Մառի մոտ մենք չենք գտնի ճարտարապետական կառուցողական, կոնստրուկտիվ հարցերի մանրամասն վերլուծություններ, վերակազմության նախագծեր։ Այս հարցերում նա ամբողջովին հենվում էր ճարտարապետներ Թորամանյանի, Բունիաթյանի, Ռոմանովի, Կնյազիցկու գործերի վրա։ Սակայն առանձին դեպքերում նա համարձակ կերպով առաջ էր քաշում ուշագրավ պրոբլեմներ, կռահումներ անում, որոնց մեծ մասը, որպես կանոն, իրենց հաստատումն էին գտնում հետագայում, ճարտարապետական տարբեր հետազոտություններում։ Այդպիսին էր հայկական ճարտարապետության հնագույն եկեղեցիների հորինվածքների ձևերի հարցը։ Ուշագրավ է, որ դեռևս անցյալ դարի վերջին, իր առաջին իսկ հետազոտությունների արդյունքները ամփոփելիս, Մառը իրավացի կերպով բազմաթիվ այլ տիպերի մեջ առանձնացրեց երկու տիպի կառուցվածքներ՝ միանավ թաղածածկ շենքերը և «աղատ խաչի» տիպի հուշարձանները, համարելով առաջինը նախատիպ հետագա բազիլիկաների համար, իսկ երկրորդը՝ կենտրոնագմբեթ կառույցների համար[18]։ Հետագա ուսումնասիրությունները լիովին հաստատեցին Մառի դրությունները։ Սակայն առանձին հարցերում նրա կարծիքները չէին ըաժանում իր իսկ գինակիցները։ Այդպիսին էր նրա ենթադրությունն այն մասին, թե իբր Անիի Մայր տաճարի ամբողջ երեսապատումը հետագայի գործ է, քանի որ այն, նրա կարծիքով, բնորոշ չէ X—XI դդ.։

Ժամանակի մեծագույն ճարտարապետ Տրդատի գործն էր այն, որտեղ լայնահուն ստեղծագործական որոնումները բերել էին խիստ յուրովի արդ-

16 Նույն տեղում, էջ 131։

17 Ս. Խ. Մնացականյան. Աղթամար. Երևան, 1983, էջ 67։

18 Отчет Имп. Археологической комиссии за 1893 г. Спб., 1895, с. 33.

դյունքի։ Եվ ահա Մառը մի ամբողջ տեսություն է մշակում, ձգտելով ապացուցել, որ տաճարի ամբողջ երեսապատումը X դարի վերջի գործ չէ և նրա արտաքին կերպարը համահնչյուն է առնվազն XII—XIII դդ. կազմավորված ոճական նոր ուղղությանը։

Մառի դրույթները մերժելի էին առաջին հերթին շինարարական-կառուցողական տեսակետից. նման վերակառուցում պարզապես անհնար էր իրականացնել։ Մառը ինքը ևս զգում էր նման վերակառուցման հիմնավորման անհրաժեշտությունը։ Նրա կարծիքով տաճարը դարեր հետո ընկել է քաղկեդոնականների ձեռքը, նրանք էլ վերակառուցել են իրենց ճաշակի համաձայն և սկզբնական հարթ պատերի փոխարեն կառույցը ստացել է նոր երեսապատում՝ մշակված սլացիկ, նրբագեղ կամարաշարերով։ Մենք նշեցինք տվյալ կոնկրետ դեպքում նման վերակառուցման շինարարական անհնարինությունը։ Սակայն Մառը նույն այս առնչությամբ առաջ է քաշում դավանաբանական տարբեր ուղղություններին պատկանող կառույցների ճարտարապետական ձևերի մեջ եղած տարբերությունների հարցը, մի բան, որին արդեն չի կարելի միանշանակ պատասխանել։ Բանն այն է, որ նման տարբերություններ չեն նկատվում ո՛չ վաղ միջնադարում և ո՛չ էլ X—XI դդ.։ Չի կարելի համաձայնվել Մառի այն դրույթի հետ, որ իբր արտաքին դեկորատիվ կամարաշարերը բնորոշ են հատկապես քաղկեդոնական դավանանքին պատկանող եկեղեցիներին։ Սակայն դրա հետ միասին ուշագրավ է, որ XIII—XIV դդ. կառուցված որոշ, իսկապես քաղկեդոնականներին պատկանող կառույցները (Ախթալա, Խուճապ, Բգավոր) որոշ հարցերում առանձնանում են ազգային եկեղեցու հուշարձաններից՝ իրենց վրա կրելով ուղղափառ եկեղեցու ճարտարապետական ձևերին բնորոշ տարրեր։

Անին, Առաջավոր Ասիայի բաղմազգ, հարուստ այդ քաղաքը, այն խառնարանն էր, որտեղ XII—XIV դդ. կառուցված շենքերի ձևերում ակնհայտ է արևելյան դեկորատիվ հարդարանքի, հատկապես աղյուսի ճարտարապետությանը բնորոշ մոտիվների ներթափանցումը և նրանց վերարտադրությունը։ Մառը առաջինն էր, որ իսկական գիտական հիմքերի վրա դրեց հայկական ճարտարապետական մշակույթի հետազոտությունը, չկտրելով, չմեկուսացնելով այն ոչ միայն Կովկասի ժողովուրդների, այլև հարևան մուսուլմանական երկրների կառուցողական արվեստից։

Մառի ծառայություններից մեկն էլ հանդիսանում է փոքրաթիվ, սակայն լուրջ, իր գործին ամբողջապես նվիրված գիտական կոլեկտիվի ստեղծումը, փաստորեն առաջին գիտահետազոտական ինստիտուտը Կովկասում։ Պատահական չէ, որ տարիներ շարունակ Մառը ջանք չէր խնայում այն է՛լ ավելի ընդարձակելու և իրավական հաստատուն հիմքերի վրա դնելու համար։ Այդ հաջողվեց միայն 1917 թ. հետո։ Այս հարցում նրան միշտ էլ զորավիգ էին հայ առաջավոր մտավորականության ներկայացուցիչները, և առաջին հերթին Հովհաննես Թումանյանը, որը երազում էր ստեղծել Հայկական ակադեմիա Մառի գլխավորությամբ։

Մառի գիտարշավի աշխատանքներում առանձնակի տեղ էին գրավում հետազոտվող և պեղվող հուշարձանների պահպանման, վերականգնման աշխատանքները։ Ամրացվեցին Փրկչի, Հովվի եկեղեցիները, կառուցվեցին հատուկ թանգարաններ և կարելի է ասել, որ հայկական իրականության պայմաններում այդ առաջին դեպքն էր, երբ հուշարձանների վերականգնման գործը դրվում էր լուրջ գիտական հիմքերի վրա։ Անիի պեղումները, հետազոտությունների շրջանակների անընդհատ լայնացումը, գիտարշավի մյուս անդամների աշխատությունները անգնահատելի նշանակություն ունեցան հայկական ճարտարապետության և արվեստի ուսումնասիրության ասպարեզում։ Եվ միանգամայն իրավացի էր Հովսեփ Օրբելին, երբ գրում էր, որ Մառի աշխատանքները Անիում անշուշտ արժանի են հավերժացման մոնումենտալ հուշարձանով։ Օրբելու այս պատկերավոր խոսքերը գրված են ճիշտ 50 տարի առաջ, երբ լույս էր տեսնում Մառի նշանավոր «Անի» աշխատու-

թյունը, և Օրբելին հատկապես նշում է, որ այդ գիրքն էլ այն առաջին քարն է, որ դրվել է այդ հուշարձանի հիմքում։

Սակայն հրատարակված աշխատությունը Մառի դասախոսությունների գրառումներն էին, ճիշտ այն դրությամբ (այդ հատկապես նշում է Մառը դրքի առաջաբանում), ինչպես նրանք կարդացվել էին տասնամյակներ առաջ։

Եվ թվում է, որ ժամանակն է ձեռնառկել Անիի գիտարշավի նյութերի ակադեմիական հրատարակությունը, որտեղ ի մի կհավաքվեն ոչ միայն Մառի, այլև գիտարշավի մյուս անդամների այն բոլոր գործերը, որոնք առնչվել են Անիի պեղումներին, Անիի հուշարձաններին։ Այդ էլ կլինի այն մոնումենտալ հուշարձանը, որի մասին երազում էր Հովսեփ Օրբելին։

ПРОБЛЕМЫ ЗОДЧЕСТВА АРМЕНИИ В ТРУДАХ НИКОЛАЯ ЯКОВЛЕВИЧА МАРРА

(К 120-летию со дня рождения)

Доктор архитектуры С. Х. МНАЦАКАНЯН

Резюме

Исследования зодчества и монументального искусства Армении неразрывно связаны с именем академика Н. Я. Марра и с возглавленными им раскопками города Ани (1892—1893 и 1904—1917 гг.). Уже первые этапы раскопок, сочетавшиеся с изучением целого ряда других памятников, дали ему возможность выдвинуть гипотезу о решающем значении однонефной сводчатой залы и сооружений типа «свободного креста» в формировании трехнефных базилик и центричных храмов. Дальнейшие разыскания привели Н. Я. Марра к выявлению двух направлений в архитектуре дохристианской Армении—местного, традиционного, уходящего корнями в глубь веков, связываемого с языческими верованиями (отметим «сооружение о 4-х пилонах», раскопанное им в Ани), и другого, генетически восходящего к наследию античного зодчества. В трудах Н. Я. Марра особое место занимают проблемы раннесредневековой архитектуры Армении,—ее истоки он видел в древних типах гражданского зодчества. Исследованию Ереруйкской базилики ученый посвятил специальную монографию; его годовые отчеты, по сути дела, являются небольшими историко-архитектурными трудами, в которых анализ композиционных решений идет на широком историческом и культурологическом фоне. Венцом его работ по исследованию истории материальной и художественной культуры Армении явилась книга «Ани». В богатом архиве ученого сохранились неопубликованные, но представляющие большую ценность материалы как о сооружениях Ани, так и по ряду других памятников средневековой Армении.